• Համառոտ հաղորդումներ • Краткие сообщения • Short communications •

Հայաստանի կենսաբ. հանդես, 4(61), 2009

ԵՆԹԱՄԱՇԿԱՅԻՆ ԲՈՌԻ ԹՐԹՈՒՐԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԵՐԻ ԿԱԹՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Հ.Զ.ՆԱՂԱՇՅԱՆ, Մ. Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Հայաստանի պետական ա□րարային համալսարան

Հետազոտելով ենթամաշկային բոռի թրթուրային շրջանի ազդեցությունը կովերի կաթնատվության վրա, պարզվել է, որ երեք ամսվա ընթացքում կենդանիների կաթնատվությունը նվազել է 15%-ով: Հիպոդերմատոզով հիվանդ կովերի կաթնատվության վրա ազդում է կենդանիների օրգանիզմում առկա հարուցիչի թրթուրների քանակությունը, ընդ որում, թրթուրների քանակի աճին զուգընթաց նկատելիորեն իջնում է կաթնատվությունը:

Հիպոդերմատոզ - տավար - բոռ թրթուր - կաթ

Изучение влияния личиночной стадии подкожного овода на молочную продуктивность зараженных коров показало, что за 3 месяца наблюдений удои животных снизились на 15%. На удои зараженных коров влияет количество личинок возбудителя в организме животных, причем с увеличением количества личинок заметно снижается молочная продуктивность коров.

Гиподерматоз - скот - овод - личинка - молоко

The research on cattle grub influence on milk productivity of cows has shown that milk yield decrease equals to 15% during 3 months of observation. Besides, the quantity of grubs in animal organism has an influence on milk yield of the infested cows. Thus milk yield decreases significantly, when the quantity of grubs increases.

Hypodermatosis - cattle – gadfly – larva – milk

Հայաստանում անասնապահության ամենադինամիկ զարգացող ճյուղերից է տավարաբուծությունը, որի զարգացմանը խոչընդոտում են ինվազիոն հիվանդությունները: Կենդանիների աճի և մթերատվության անկման պատճառներից է հանդիսանում Հայաստանում և հարևան երկրներում մեծ տարածում գտած խոշոր եղջերավոր անասունների մոտ հանդիպող հիպոդերմատոզ հիվանդությունը:

Հիպոդերմատոզը խրոնիկական հիվանդություն է, որն արտահայտվում է հարուցիչի թրթուրների տեղակայման վայրում առաջացող բորբոքային երևույթներով, օրգանիզմի ընդհանուր թունավորման և մթերատվության անկման նշաններով: Հայտնի է, որ հիպոդերմատոզով հիվանդ կովերի մոտ կաթի կորուստը տարեկան կազմում է 90-200 կգ, մսինը՝ 13-18 կգ, իսկ կաշեհումքինը՝ 8 % [1-3]:

Հիվանդությունը հարուցվում է բոռի երկու տեսակների՝ *Hypoderma bovis* (սովորական բոռ) և *H. lineatum* (կերակրափողային բոռ) թրթուրների կողմից: Մաշկային բոռի այս երկու տեսակների կյանքի տևողությունը ընդամենը մեկ օրացույցային տարի է, որից 10 ամիս նրանք անց են կացնում տավարի օրգանիզմում, իսկ մնացած երկու ամիսն արտաքին միջավայրում, որից հետո ոչնչանում են:

Աշխատանքի նպատակն է պարզել ենթամաշկային բոռի թրթուրային շրջանի ազդեցությունը կովերի կաթնատվության վրա:

Նյութ և մեթոդ: Հետազոտությունները կատարվել են 2006-2007 թթ. Արագածոտնի մարզի նախալեռնային գոտու ֆերմերային տնտեսություններում: Այս և տարածաշրջանի այլ տնտեսություններում տավարի հիպոդերմատոզը յուրաքանչյուր տարի զգալի վնաս է պատճառում ֆերմերներին: Ենթամաշկային բոռի թրթուրային շրջանի ազդեցությունը կովերի կաթնատվության վրա պարզելու նպատակով ընտրվեցին 20 գլուխ միևնույն տարիքի և ծնի, շատ թե քիչ չափով միևնույն կաթնատվությամբ կովեր:

Կենդանիները հետազոտվել են փետրվարից մայիս ընկած ժամանակահատվածում: Փետրվարի սկզբին առանձնացվեցին ենթամաշկային բոռի թրթուրներով վարակված 10 կովեր և ներառվեցին փորձնական խմբի մեջ: Այնուհետև անցկացվել են ամենամսյա զննումներ և հաշվվել են մեջքի ու գոտկատեղի հատվածում առաջացող թրթուրների քանակությունը:

Մանրազննին հետազոտություններից հետո առանձնացվեցին 10 չվարակված կովեր, որոնք էլ համարվեցին ստուգիչներ:

Նախքան ստուգիչ և փորձնական խմբերի կովերի կաթնատվության փոփոխությունները ուսումնասիրելը, երեք օրվա ընթացքում անցկացվեց ստուգիչ կիթ, որի ընթացքում պարզվեց, որ երկու խմբերի կենդանիների կաթնատվությունը գրեթե հավասար է:

Հաջորդ ամիսների ընթացքում կենդանիները գտնվել են պահվածքի, կերակրման և խնամքի միևնույն պայմաններում:

Արդյունքներ և քննարկում: Հետազոտությունների արդյունքները բերված են թիվ 1 աղյուսակում:

Աղյուսակ 1. Փորձնական և ստուգիչ խմբերի կովերի կաթնատվության փոփոխությունները ըստ ամիսների, կգ

Հետազոտված ժամանակահատվածը	Փորձնական խումբ		Ստուգիչ խումբ	
	կաթնատվությունը	նվազել է	կաթնատվությունը	ավելացել է
Փետրվար	1680	-	1708	-
Մարտ	1625	55	1824	116
Ապրիլ	1537	88	1919	95
Մայիս	1457	80	1991	72
Ընդամենը	6299	233	7442	283

Ինչպես երևում է աղ. 1 տվյալներից, ստուգիչ խմբի կենդանիների կաթնատվությունը ամբողջ փորձաշրջանի ընթացքում ավելացել է: Փետրվարին կովերի միջին կաթնատվությունը կազմել է 1708 կգ, իսկ փորձաշրջանի վերջում՝ մայիսին այն հասել է 1991 կգ-ի (16%): Այսպիսով, 3 ամսվա ընթացքում կաթնատվությունը ավելացել է 283 կգ, իսկ միջինը կազմում է 28,3 կգ:

Ի տարբերություն ստուգիչ խմբի փորձնական խմբի կենդանիների կաթնատվությունը աստիճանաբար նվազել է, 3 ամսվա ընթացքում այն իջել է 223 կգ կամ 13,3 %, միջինը 22,3 կգ մեկ կենդանու հաշվով:

Փորձնական և ստուգիչ խմբերի կենդանիների կաթնատվության տվյալները 3 ամիսների ընթացքում ցույց են տալիս, որ ստուգիչ խմբի կենդանիների կաթնատվությունը կազմում է 7442 կգ, իսկ փորձնական խմբինը՝ 6299 կգ: Փորձնական խմբի կենդանիների կաթնատվությունը ստուգիչ խմբի կենդանիների համեմատ նվազել է 1143 կգ (15%), որը ամենամսյա տվյալներով կազմում է 381 կգ, իսկ մեկ կովի հաշվով՝ 38,1 կգ:

Անհրաժեշտ է ընդգծել, որ այդ նույն ժամանակաընթացքում ստուգիչ խմբի կենդանիների կաթնատվությունը ավելացել է 283 կգ-ով:

Եթե փորձնական խմբի կովերը վարակված չլինեին ենթամաշկային բոռի թրթուրներով և տային նույնքան կաթ, որքան ստուգիչ խմբի կովերը, ապա նրանցից ստացված կաթի քանակությունը կկազմեր 506 կգ, այսինքն փորձնական խմբի կենդանիները 3 ամսվա ընթացքում չեն տվել 506 կգ կաթ:

Կատարված փորձերի ընթացքում մեր կողմից հայտնաբերվել է մի շատ հետաքրքիր երևույթ: Պարզվել է, որ հիպոդերմատոզով հիվանդ կովերի կաթնատվության վրա ազդում է նաև կենդանիների օրգանիզմում առկա հարուցիչի թրթուրների քանակությունը, ընդ որում, թրթուրների քանակի աճին զուգընթաց նկատելիորեն իջնում է կաթնատվությունը:

Հետազոտությունների արդյունքները բերված են թիվ 2 աղյուսակում:

Այսպես, եթե փորձնական խմբում կովերի վարակվածությունը փետրվար ամսին մեկ գլխի հաշվով կազմում է միջինը 5,4 թրթուր, այս դեպքում կաթնատվության մեջ զգալի փոփոխություններ չեն նկատվում: Թրթուրների քանակի ավելացմանը զուգահեռ արձանագրվում է կաթնատվության աստիճանական նվազում: Այսպես, կովերի մոտ 5,4 թրթուրի առկայության պայմաններում, կաթնատվությունը կազմել է 1680 կգ, իսկ հաջորդ ամիսներին թրթուրների քանակության աճին զուգահեռաբար միջին կաթնատվությունը կազմել է 1625 կգ, որը մեկ ամսվա ընթացքում նվազել է 55 կգ-ով:

Աղյուսակ 2. Փորձնական խմբի կովերի կաթնատվության փոփոխությունները կախված ենթամաշկային բոռի թրթուրներով վարակվածության աստիճանից, կգ

Եվ այսպես շարունակ, ողջ փորձաշրջանի ընթացքում փորձարկվող խմբի կենդանիների կաթնատվությունը նվազել է 223 կգ-

Կենդանիների հերթական համարները	Փետրվար		Մարտ		Ապրիլ		Մայիս		կաթնատվությունը նվազել է	Ամենեան միջին կաթնատվությունը	Ամբողջ փորձաշրջանի ընթացքում
	թրթուրների քանակությունը, միջին	կաթնատվությունը	թրթուրների քանակությունը, միջին	կաթնատվությունը	թրթուրների քանակությունը, միջին	կաթնատվությունը	թրթուրների քանակությունը, միջին	կաթնատվությունը			
1	4	171	7	169	12	159	17	151	20	216,6	650
2	5	170	10	165	15	155	20	147	23	212,0	637
3	4	172	8	167	13	157	18	150	22	215,0	646
4	6	166	10	161	16	153	21	145	21	208,0	625
5	7	163	13	156	18	150	24	142	21	203,6	611
6	5	169	9	167	14	156	19	149	20	213,6	641
7	6	167	12	158	18	151	22	144	23	206,6	620
8	8	162	14	155	20	149	25	140	22	202,0	606
9	5	169	11	159	17	152	23	143	26	207,6	623
10	4	171	8	168	14	155	20	146	25	213,0	640
Ընդամենը	5,4	1680	10,2	1625	15,7	1537	20,9	1457	223	2098	6299

ով կամ ամեն ամիս 55,8 կգ:

Բացի վերոհիշյալից, կաթնատվության փոփոխությունները կախված կենդանիների վարակվածության աստիճանից, ուսումնա սիրվել

են առանձին ուժեղ վարակված կովերի մոտ: Այսպես, դ 8 կենդանու մոտ փետրվարին 8 թրթուրներով վարակվածության դեպքում կաթնատվությունը կազմել է 162 կգ, մարտին, երբ թրթուրների քանակությունը հասնում է 11-ի, կաթնատվությունը նվազում է 10 կգ, 20 թրթուրներով վարակվածության դեպքում կաթնատվությունը կազմում է 149 կգ, իսկ երբ վարակվածությունը հասնում է 25 թրթուրի, կաթնատվությունը նվազում է 140 կգ: Այս կերպ, 4 ամիսների ընթացքում բոռի թրթուրներով վարակված կովի կաթնատվությունը նվազել է 22 կգ կամ 5,5 կգ կաթ յուրաքանչյուր ամսում:

Այսպիսով, կատարված հետազոտությունների հիման վրա կարելի է հանգել այն եզրակացության, որ խոշոր եղջերավոր անասունների հիպոդերմատոզը պատճառ է հանդիսանում կաթնատու կովերի կաթնատվության նվազմանը և այսպիսով մեծ վնաս է հասցնում անասնապահությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Հ.Զ. Նաղաշյան,* Մակաբուծաբանություն և կենդանիների ինվազիոն հիվանդություններ, Երևան, □ՍԱՐՎԱՐԴ□, 2003:
2. *Непоклонов А.* "Животноводство России", 5 (6), стр. 78-81, 2000.
3. *Окунев А.М.* Сб.науч.тр. ВНИИВЭА., 36, стр.89-92, 1994/1995

Ստացվել է 26.06.2009